ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

# *ՈՐՈՇՈՒՄ N 9*

*«09»-ը փետրվարի 2015թ.* *ք. Մարտունի*

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաղաշեն գյուղական համայնքի կողմից Մարտունի համայնքին վերադարձրած գյուղատնտեսական նշանակության հողերը ընդունելու և դրանք Մարտունի համայնքի հողային հաշվեկշռի մեջ ներառելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

Հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի ավագանու 22.01.2015 թ. թիվ 06-Ա որոշումը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի, 47-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով և նկատի ունենալով, որ <<ՀՀ վարչատարածքային բաժանման մասին>> օրենքի համաձայն դրանք առանց որևէ հիմնավոր պատճառի վերցվել էին Մարտունի համայնքից և տրվել Վաղաշեն համայնքին և որ այդ հատվածում են գտնվում Մարտունի քաղաքի շուրջ 1500 քաղաքացիների սեփականաշնորհված հողերը.

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի կողմից Մարտունի քաղաքին վերադարձված 154,2 հա գյուղատնտեսական նշանակության հողերը ընդգրկել Մարտունու վարչական սահմանների մեջ և դրանք ներառել Մարտունի համայնքի հողային հաշվեկշռի մեջ որպես համայնքային սեփականություն:

2. Խնդրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետ պարոն Ռաֆիկ Գրիգորյանին Մարտունի և Վաղաշեն համայնքների վարչական սահմանների մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու հարցը ՀՀ Կառավարությունում քննարկման առարկա դարձնելու և հարցին դրական լուծում տալու համար:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 9 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝

Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՋԻՐՈՅԱՆ
Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Ե. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Վ. ՄՀԵՐՅԱՆ
Խ.ԴԱՎԹՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Վաղաշեն, (0262)-4-41-79, (0262)-4-36-42 vaghashen.g.p@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22-ը հունվարի 2015 թվականի N 6-Ա

### ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԵՎ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 154.2 ՀԵԿՏԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, քննարկելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու քաղաքապետի 16.01.2015 թ.-ի N11 գրությունը և նկատի ունենալով, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի վարչական սահմաններում ընդգրկված 154.2 հա գյուղատնտեսական նշանակության հողամասերը սեփականության իրավունքով պատկանում են Մարտունի քաղաքի բնակիչներին և սեփականաշնորհման գործընթացից հետո օգտագործվել են նրանց կողմից, Վաղաշեն և Մարտունի համայնքների միջև այդ տարածքի հետ կապված որևէ վեճ կամ տարածքային խնդիր չի եղել, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի վարչական սահմաններում ընդգրկված և նույն մարզի Մարտունի քաղաքի բնակիչներին սեփականության իրավունքով պատկանող 154.2 հա գյուղատնտեսական նշանակության հողամասերը Վաղաշեն համայնքի վարչական տարածքից փոխանցել Մարտունի քաղաքի վարչական տարածք:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՖԵՈԴՈՐ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՅՐ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
4. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՅՈՒՐԻԿ
5. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐԶԱՋԱՆ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԲԱՅԱՆԴՈՒՐ
7. ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
8. ՍՈՒՎԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԼԱԶՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հաստատում եմ`------------------

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ ` Ռ. Գրիգորյան

«16»-02-2015թ.

Հաստատում եմ`---

Մարտունու քաղաքա

«09»-02-2015թ.



Հաստատում եմ՝----------------

...պետ՝ Բ. Հարությունյան

Վաղաշենի գյուղապետ ՝ Ա. Մուվարյան

«22»-01-2015թ.




Պայմանական նշաններ

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ

ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ

ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻՑ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՓՈԽԱՆՑՎՈՂ 154.2 ՀԱ ՀՈՂԱՄԱՍ